«Եկե՛ք ինձ, բոլոր հոգնածներ ու բեռնավորվածներ»։

Մատթեոս 11:28

ԱՍՏՎԱԾԻ ԼՈՒՐ

Հունիս 2026, N5 (180)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՀԱՎԱՏՔԻ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐ

ԲԱՐԻ ԼՈՒՐ

ԱՄՍԱԳԻՐ

Հունիս 2026թ., N5 (180)

Լույս է տեսնում 2009թ. մայիսից

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ ԿԱՐԴԱՑԵ՛Ք

Պավել Գրիգորյան

Ճանաչիր Աստծու Սերը 1

Եզդի եղբոր վկայությունը 5

Դրվագներ Իվան Անտոնովիչ Լևչուկի կյանքից

Օգնում էր բոլորին 7

Զգայուն սիրտը 9

Ջյունածածկ գերանների վրա 10

Կյանքի խնդիրներն ու ջրով լի բաժակը 11

Թե ինչպես բժշկվեցի քաղցկեղից. վկայություն 12

Աստվածաշունչը՝ մայրիկիս թարգմանությամբ 15

«Անհնար է»-ն միայն միտք է... 16

Սիրելի՛ ընթերցողներ, խնդրում ենք աղոթել, որ թերթի միջոցով տարածվի Ավետարանի Բարի Լուրը, ու ցանվեն Ճշմարտության սերմերը, որպեսզի մարդիկ դառնան Աստծուն և Հավիտենական Կյանք ունենան:

Սիրելի՛ ընթերցողներ, խնդրում ենք ձեր դիտողությունները, առաջարկությունները ու նվիրատվությունները ուղարկել խմբագրություն: Մենք սիրով հաշվի կառնենք ձեր արձագանքները:
Էլ. հասցե՝ info@barilur.org

ՃԱՆԱՉԻՐ ԱՍՏԾՈՒ ՍԵՐԸ

Սիրելինե՛ր,ուզում եմ փոխանցել ձեզ այն, ինչ սովորել եմ հոգևոր կյանքում: Հոգեվոր կյանքում երեք կարևոր բան է հարկավոր սովորել:

Առաջինը՝ ճանաչել Աստծու սերը: Սուրբ Գրքում այդ մասին գրված է. *«Եւ մենք ճանչցանք ու հաւատացինք այն սէրը զոր Աստուած մեր վրայ ունի. Աստուած սէր է, և ան որ սիրոյ մէջ կը բնակի, Աստուծոյ մէջ կը բնակի, ու Աստուած՝ անոր մէջ»* ***(Ա Հովհ. 4:16):*** Եթե Նրա սերը չճանաչեցինք, չենք կարող Նրա հետ ձուլվել, մեկանալ: Ամենակարեվորը ճանաչելը և հավատալն է Նրա սիրուն: Ողջ Հին Ուխտում ոչ մի տեղ գրված չէ, որ Աստված սեր է, իսկ Հովհաննեսը նույն գրքում երկու անգամ է նշում այդ մասին՝ մեկը 8-րդ խոսքում. *«Ան որ չսիրեր՝ զԱստուած չճանչնար. վասն զի Աստուած սէր է»* և մյուսը՝ 16-րդում. *«Եւ մենք ճանչցանք ու հաւատացինք այն սէրը զոր Աստուած մեր վրայ ունի. Աստուած սէր է, և ան որ սիրոյ մէջ կը բնակի, Աստուծոյ մէջ կը բնակի, ու Աստուած՝ անոր մէջ» (Ա Հովհ. 4:16):* Աստված սեր է... սա հրաշալի է: Եթե դու Սերը չես ճանաչում՝ Նրա հետ կապ չունես: Ես քսանմեկ տարեկան էի, երբ Աստծուն եկա... լալիս էի ու ասում. «Աստվա՛ծ ջան, ես շատ պիղծ մարդ եմ, Դու ինձ չես սիրում», բայց հիմա գիտե՞ք ինչքան եմ ճանաչում Նրա սերը. այնքան, որ ինձ հետ ինչ էլ պատահի՝ հիվանդություն, դըժբախտություն, դժվարություն, գիտեմ, որ դա սիրուց է արվում: Հոբը 13-րդ գլխի 15-րդ խոսքում ասում է. *«Թէև անիկա զիս սպաննէ, ես անոր պիտի յուսամ»:* Այդքան տառապանքից հետո էլ ասում է. *«Թէև անիկա զիս սպաննէ, ես անոր պիտի յուսամ»:* Աստծու սերը ճանաչած մարդը ինքն իրեն արժևորելը անիմաստ է համարում, բայց Հիսուսն ինձ արժևորել է՝ Իր արյունով է ինձ գնել: Հիսուսի արյունից թանկ բան չկա, և այդ արյունով է Նա քեզ գնել:

Երկրորդ կարևոր բանը, որ սովորել եմ՝ ճանաչել ինքս ինձ, իմանալ, որ աշխարհի ամենավատ մարդը ե՛ս եմ, Հիսուսին խաչողը ե՛ս եմ, Հիսուսին մատնողը ե՛ս եմ, Հիսուսին երկնքից երկիր բերողը ե՛ս եմ: Կան մարդիկ, ովքեր շատ բաներ են ուզում սովորել, շատ բաներ է հետաքրքրքրում նրանց, ուզում են սպասավոր լինել, քարոզիչ, երգիչ, երևելի անձ... դրանք անիմաստ են: Քսանմեկ տարեկանում կարդացի Հիսուսի աղոթքն՝ ուղղված Հորը, և ուզեցի, որ ես էլ Նրանց հետ մեկ լինեմ: Նա չի ասում՝ դու իմ ծառան լինես, այլ մեկ լինել է ուզում:

Բ Տիմոթ. 1:9-ում կարդում ենք. *«Որ մեզ փրկեց ու սուրբ կոչումով կանչեց, ոչ թէ մեր գործերուն նայելով, հապա իր նախասահմանութեանը ու շնորհքին նայելով, որ Քրիստոս Յիսուսով մեզի տրուեցաւ յաւիտենական դարերէն առաջ»:* Նա՝ քո Աստվածը, հավիտենական դարերից առաջ քո մասին մտահոգվել է: Գիտե՞ք ինչ է ասել Նապոլեոնը Հիսուսի մասին. «Ալեքսանդրը, Կեսարը, Կառլոս Մեծը, մենք կայսրություններ կառուցեցինք ուժով, բայց Հիսուս Քրիստոսը Իր թագավորությունը հիմնեց սիրո վրա, և այսօր միլիոնավոր մարդիկ պատրաստ են մեռնելու Նրա համար»: Ինչպիսի՜ սեր պետք է ունենալ՝ իրեն խաչողների համար Հորից ներում խնդրելու: Երբ Հայրը թողեց Նրան, Հիսուսը ճաշակեց կրակե լճի մահը: Հիսուսից բացի այդպիսի սաստիկ ողբ աշխարհում ոչ ոք չի արել: Նա ողբաց, երբ Հայրը թողեց Իրեն. *«Որ իր մարմինին օրերը սաստիկ գոչումով ու արցունքով աղօթք և աղաչանք մատուց անոր որ կարող էր զինք մահուանէ ազատել, ու լսուեցաւ իր բարեպաշտութեանը պատճառաւ»* ***(Եբր. 5:7):*** Նրա սերը ուրիշ է, պետք է ճանաչել Հիսուսի սերը, որովհետև այդպիսի սեր ունեցողը իր թշնամուն էլ է սիրում:

Մի կնոջ վկայել էի Հիսուսի մասին, և նա ընդունել էր Տիրոջը: Նրա ամուսինն ինձ ավտոբուսի կանգառում բռնեց ու վերջին հայհոյանքները տվեց: Հաջորդ օրը զարթնեցի ժամը հինգին, աղոթեցի մի ժամ, որպեսզի ժամը վեցին, երբ այդ մարդը մեր դռնով անցնի՝ գրկեմ ու համբուրեմ: Ես դա արեցի: Այդ սերն այդպիսին է, բայց շատ հավատացյալ ամուսնական զույգեր իրար հետ հաշտ չեն, հավատացյալ քույր ու եղ-

բայր իրար հետ հաշտ չեն: Ի՞նչ եք կարծում, նրանք հավատքից բան հասկացե՞լ են, ի՞նչ են սովորել Հիսուսից: Նա խաչի վրա մտածեց մոր մասին՝ ասաց. «Ահա՛ քո որդին», մտածեց խաչված ավազակի մասին՝ ասաց. «Այսօր Ինձ հետ Դրախտում կլինես...» Ո՞վ է մեռնելով ուրիշին փրկում: Ահա՛ թե ինչ զորավոր է Նրա սերը: *«Եւ մենք ճանչցանք ու հաւատացինք այն սէրը զոր Աստուած մեր վրայ ունի. Աստուած սէր է, և ան որ սիրոյ մէջ կը բնակի, Աստուծոյ մէջ կը բնակի, ու Աստուած՝ անոր մէջ»* ***(Ա Հովհ. 4:16):*** Երբ ինձ բացվեց, որ խաչի վրա Հիսուսն ապրել է կրակե լճի տառապանքը՝ հասկացա, որ բոլորին պիտի ներեմ:

Երրորդը՝ բոլոր մարդիկ սուտ են՝ ըստ Սուրբ Գրքի: Երբ դա ինձ բացվեց՝ իմացա, որ ես ստության մայրաքաղաք եմ, ու երբ կարդացի 119 սաղմոսի 163-րդ խոսքը՝ *«Ստութիւնը ատեցի ու անարգեցի, Բայց քու օրէնքդ սիրեցի», հասկացա, որ ինքդ քեզ էնպես պիտի ատես ու անարգես, որ ուրիշի անարգանքը քեզ չկպնի: Ես դա կյանքով եմ ապրել ու կարող եմ վկայել, որ այդ խոսքերն իմ կյանքում իրականացել են: Եթե դու քեզ չատես ու չանարգես, ո՛չ Աստծուն կսիրես, ո՛չ էլ Նրա օրենքը: Տեսե՛ք, թե ինչ է գրված Աստծու օրենքը սիրողների մասին. «Քու օրէնքդ սիրողներուն շատ խաղաղութիւն կայ, Ու անոնց գայթակղութիւն չըլլար»* ***(Սաղմ. 119:165):*** Ես նորահավատ էի, երբ կարդացի. *«Գիտեմ քու գործերդ՝ որ դուն անուն ունիս թէ կենդանի ես, ու մեռած ես»* ***(Հայտն. 3:1),*** *«Սակայն քանի մը անձեր ունիս Սարդիկէի մէջ, որոնք իրենց հանդերձները չաղտոտեցին, և ճերմակներով պիտի պտըտին ինծի հետ, քանզի արժանի են»:* Ես ամսով լաց էի լինում, խնդրում էի Տիրոջից, որ ինձ էլ սովորեցնի այն, ինչը սովորեցրել էր այդ մեռած եկեղեցում Տիրոջը հաճելի կյանքով ապրողներին: Վերջապես Տերը խոսեց ինձ հետ ու ասաց. «Նրանք սուրբ սիրտ են ունեցել, նայել են միշտ Ինձ ու Իմ խոսքին»: Սո՛ւրբ ապրեք, սուրբ սի՛րտ ունեցեք և այդ սուրբ սրտո՛վ ձեր Աստծուն պաշտեք: Ի՞նչ եք սովորել ձեր հավատքի մեջ... ձեր Աստվածը սեր է, իսկ դուք սիրուց գաղափար չունեք: Չե՞ք կարդացել, թե **Ա Կորնթ. 13**-րդ գլխում ի՛նչ է գրված սիրո մասին: Չկա մեկը, որ կարողանա բացատրել, թե ինչ է սերը: Դա կարող է անել

միայն Սերը: Այդ մասին գրված է Աստվածաշունչ մատյանում. *«Եւ քու անունդ անոնց ճանչցուցի, ու պիտի ճանչցնեմ, որպէս զի այն սէրը որով դուն զիս սիրեցիր, անոնց մէջ ըլլայ, ու ես ալ անոնց մէջ»* ***(Հովհ. 17:26):*** Տեսե՛ք, թե ինչ է գրված մեկ այլ տեղում. *«Տէրը բարի և ուղիղ է. Անոր համար մեղաւորներուն կը սորվեցնէ ճամբան»* ***(Սաղմ. 25:8):*** Այս բոլոր Խոսքերը հաստատված են Տիրոջ կյանքով՝ Գերգեսացի դիվահարը... նա շատ պիղծ էր, քանի որ նրա ներսում երկու հազար դև էր ապրում, բայց այդ մի հոգու համար Հիսուսը նստեց նավը, գնաց այդ դիվահարին ազատագրելու, Իր ճանապարհները սովորեցնելու: Սերը գիտի, թե ինչ հոգի է ստեղծել քո մեջ: Դու չես կարող ո՛չ որևէ մեկի հոգին տեսնել, ո՛չ էլ ինքդ քոնը: Դա կարող է անել միայն Արարիչը: Եդեմի պարտեզում սատանան ջախջախեց Ադամին ու Եվային, բայց տեսե՛ք, թե Սերը ում է ջախջախում. *«Բայց Տէրը հաճեցաւ որ զանիկա ծեծելով ցաւերու մատնէ. Անոր անձը մեղքի համար զոհ ընելէդ ետքը»* ***(Ես. 53:10):*** Սերն Իր Որդուն է ջախջախում մեր փրկության համար: Գրված է. *«Դուն, որուն աչքերը չարութիւն տեսնելէն մաքուր են, Ու անիրաւութեան նայելու կարող չես»* ***(Ամբ. 1:13),*** Նա Իր Որդուն մեզ համար մեղք դարձրեց ու ջաղջախեց, որ մենք կյանք ունենանք: Ես խորը համոզմունք ունեմ, որ հավիտենությունը չի բավականացնի այդ Սերը ճանաչելու համար: Այսօր ամբողջ երկրագունդը այդ սերն է պահում, այդքան կենդանիներին, թռչուններին Նրա սերն է պահում, էլ ո՞ւր մնաց՝ չպահի մարդուն, որը նրա արյան գինն է: Բոլոր հավատացյալները Տիրոջ արյան գինն են, և նրանք բոլորը ինձ համար շատ թանկ են:

Սա հոգով ապրել է պետք, որ հասկանաս՝ քո Աստված սեր է, դու Սիրո որդին ես, Նա քեզ ծնել է Իր համար: Հին ուխտում մարդը «Հայր մեր»-ը չի իմացել, բայց մենք ինչքա՜ն պիտի փառք տանք, որ Նա ասաց՝ Գնում եմ Իմ Հոր քով և ձեր Հոր քով, Իմ Աստծու մոտ և ձեր Աստծու մոտ: Մեր Հայրը սեր է, և Նրան պետք է պաշտել Հոգով ու Ճշմարտությունով:

Պավել Գրիգորյան

ԵԶԴԻ ԵՂԲՈՐ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Ես ազգությամբ եզդի եմ: 2007թ. ընդունել եմ Հիսուսին՝ որպես անձնական Տեր և Փրկիչ: Երևի շատերդ եք տեղյակ, որ եզդի ազգն ունի այլ դավանանք. պաշտում է սատանային՝ Մալաքի Թաուսին, ինչը թարգմանաբար նշանակում է «երկնքից ընկած հրեշտակ»: Մալաքի Թաուսի մյուս անվանումներից է Ազրայելը, որը նշանակում է «մահվան հրեշտակ»:

Կարծում եմ՝ հասկանալի է, թե ինչ հալածանք և ինչ անարգանք է սպասվում այն անձնավորությանը, որը հրաժարվում է իր հայրերի դավանած կրոնից և ընդունում է Տեր Հիսուս Քրիստոսին:

Որքան էլ որ եզդիները փորձում են Մալաքի Թաուսի պաշտամունքը ներկայացնել լուսավոր՝ որպես ուժի և զորության խորհրդանիշ, միևնույնն է՝ ճշմարտությունը մեկն է, և միայն Հիսուսին ընդունելուց հետո ես հասկանում, թե ինչ ցավալի վիճակում է գտնվում քո ազգը, որ կենդանի, երկինք և երկիր ստեղծող Արարչի փոխարեն պաշտամունք է մատուցում հակառակորդին և գնում նրա ետևից դեպի հավիտյան կորուստ:

Սա ասում եմ, որպեսզի բացատրեմ, թե ինչ ցավ է ինձ համար, երբ իմ հարազատներից մեկը մահանում է Տիրոջը չընդունած: Վերջերս, բավականին մեծ տարիքում, մահացավ մի անձնավորություն, որին շատ սիրել եմ որպես տատիկ: Նա քաղցրալեզու, հաշտարար բնավորությամբ կին էր, աշխատում էր որևէ մեկին չնեղացնել, անգամ երբ մեր հավատացյալ բարեկամներից մեկը խնդրում էր միասին աղոթքի կանգնել՝ աղոթում էր, չէր մերժում:

Եվ ես ինձ շատ մեղավոր էի զգում, որ չեմ հասցրել նրան մեռնելուց առաջ այցելել ու խնդրել, որ կանչի Հիսուսի անունը: Այս մտքերով և ծանրացած սրտով պառկեցի քնելու: Գիշերը երազում զգում եմ, որ մեկն ինձ բարձրացնում է վերև, ու այնտե-

ղից տեսնում եմ մի մութ, խավար սենյակ, որտեղ մի փոքր լույս անգամ չէր թափանցում: Հանկարծ այդ սենյակի դուռը բացվեց, տատիկս մտավ ներս, ու դուռն անմիջապես նրա ետևից գոցվեց: Այդ պահին կողքիս զգացի Տիրոջ ներկայությունը, Նա ձեռքով փակեց աչքերս, որպեսզի չտեսնեմ, թե այդ սենյակում ինչ է կատարվում: Այդ պահին լսեցի մի թանկ ու հարազատ ձայն, որն արդեն երեսուերկու տարի է չէի լսել: Դա հորս ձայնն էր, որ երեսուներկու տարի առաջ մահացել էր: Նա տատիկիցս ջուր էր խնդրում՝ մտածելով, որ նոր է եկել այդտեղ, հնարավոր է մոտը ջուր ունենա. «Ջո՛ւր տուր ինձ»,- աղերսում էր նա: Տատիկս դեռ լիարժեք չէր հասկանում, թե որտեղ է ինքը, և ասաց. «Ես ջուր չունեմ, ինձ մոտ ջուր չկա»: Այդ պահին լսեցի մեկ այլ հարազատի ձայն, որն ասում էր. «Ջուր տուր, որ լցնեմ վերքերիս վրա, արդեն քանի տարի է՝ տանջվում եմ այստեղ: Տատիկս լացակումած ասաց. «Ես ջուր չունեմ, ինձ մոտ ջուր չկա»: Հետո լսեցի մյուս հարազատներիս ձայները, որ միայն ջուր էին աղերսում: Երբ տատիկս լսեց իր հարազատների ձայները՝ սկսեց պատմել, թե ինչպես են հիմա ապրում նրանց ընտանիքները, թե ինչպես են մեծացել նրանց երեխաները... Սակայն այդ ամենը նրանց չէր հետաքրքրում, այլ միայն աղաչելով ջուր էին խնդրում. «Մենք տառապում ենք էստեղ, ջո՛ւր տուր մեզ»:

Հետո հասկացա, որ այստեղ մտնող յուրաքանչյուրից նրանք ջուր են ակնկալում՝ մտածելով, որ նոր է եկել, կարող է իր հետ ջուր ունենա:

Ես շատ ազդվեցի այդ ձայներից և խնդրեցի Տիրոջը, որ թույլ տա նրանց տեսնեմ ու ջուր տամ: Տերն ասաց. «Ո՛չ, զավա՛կս, մի՞թե չես տեսնում, որ նրանք այլևս ոչ մի հնարավորություն չունեն: Այդ կենդանի ջուրը տրվում է միայն երկրի վրա ապրողներին, իսկ նրանք արդեն բաց են թողել հնարավորությունը»: Ես հասկացա, որ թեև տատիկս շատ քաղցր բնավորությամբ խաղաղարար կին էր և որոշ հավատացյալների հետ անգամ աղոթք է արել, դա միայն մարդկանց չմերժելու համար է արել, իսկ նրա սիրտը հեռու է եղել Աստծուց: Այդ պահին տեսա, որ տատիկս սկսեց փնտրել մահացած մի բարեկամի՝ կարծելով, որ նա նույնպես այդտեղ է, բայց վերևից տեսա, որ այդ խավար սենյակի կողքին մի լուսավոր սենյակի

դուռ բացվեց: Տատիկիս փնտրած բարեկամը այդ սենյակում էր՝ մի քանի այլ բարեկամների հետ, ովքեր իրենց կենդանության օրոք ընդունել էին Հիսուսին: Այդ սենյակում չկար ո՛չ լաց, ո՛չ տառապանք, նրանք սպասում էին, որ տատիկս կմտնի այդ լուսավոր սենյակ, նրանք ափսոսանք էին ապրում, որ մի հոգի ևս կարող էր փրկվել, բայց գնաց հավիտենական կորուստ:

Խավար սենյակից հետո իմ հարազատներից ոմանց լուսավոր սենյակում տեսնելով՝ ես մեծ մխիթարություն ապրեցի: Այդ պահին լսեցի Տիրոջ ձայնը. «Գնա՛, ու այս ամենը պատմիր ո՛չ թե անհավատներին, այլ իմ ժողովրդին: Ասա՛ նրանց, որ դժոխքում միայն ջուր են խնդրում, և այդ հոգիները ջրից բացի ոչ մի ուրիշ բանի կարիք չունեն: Դա այն կենդանի ջուրն է, որ նրանք մերժել են երկրի վրա ապրած ժամանակ: Իմ ժողովրդից շատերը թողել են Կենդանի ջրի աղբյուրը, հեռացել են Ինձանից: Ասա՛ նրանց, որ քանի ժամանակ կա՝ մոտենան ու խրմեն այդ կենդանի ջրի աղբյուրից, որ բխում է հավիտենական կյանքի համար:

ԴՐՎԱ ԳՆԵՐՆ ԻՎԱՆ ԱՆՏՈՆՈՎԻՉ ԼԵՎՉՈՒԿԻ ԿՅԱՆՔԻՑ

Օգնում էր բոլորին

Ես Իվան Անտոնովիչի հետ ծանոթացել եմ մոտավորապես 1974 թվականին,- հիշում է եպիսկոպոս Միխայիլ Չիժը: - Նա այդ ժամանակ աշխատում էր իմ քրոջ՝ Լինայի և նրա ամուսնու՝ Նիկոլայի հետ, որը Կիևի Ֆրունզե փողոցում գտնվող ծննդատան գազի կաթսայատան օպերատորն էր: Նրանք բակում մաքրություն էին պահպանում, ինչպես նաև աշխատում էին որպես բեռնակիրներ: Իվան Անտոնովիչի առող-

ջությունը քայքայվել էր բանտերում ու աքսորում անցկացրած տարիների ընթացքում, և որպես բեռնակիր աշխատելիս նա հաճախ փոխում էր քրտինքից թրջված շապիկը, հագնում էր չորը, իսկ թաց շապիկը կախում էր ջեռուցման կաթսայի մոտ՝ չորանալու: Երբ Լևչուկ եղբորը պետք էր ինչ-որ տեղ գնալ՝ հանդիպման կամ ծառայության, եղբայրներն ու քույրերը փոխարինում էին նրան աշխատավայրում, իսկ հետո նա լրացնում էր իր աշխատաժամերը:

Երբ երիտասարդ Միխայիլ Չիժը հեռացվում է տեխնիկումից՝ որպես աղանդավոր հավատացյալ, նա գալիս է Իվան Անտոնովիչի տուն՝ խորհրդակցելու, բայց եպիսկոպոսին գտնում է շատ բարձր ջերմությամբ, հիվանդ: Չնայած դրան՝ եպիսկոպոս Լևչուկը ջերմորեն ողջունում է երիտասարդին, աջակցում, մխիթարում, խրախուսում, խորհուրդներ տալիս, թե ինչպես պաշտպանի իր իրավունքները: Այդ իմաստուն խորհուրդների շնորհիվ Միխայիլը հաղթում է տեխնիկումի ղեկավարության դեմ պայքարում և, այնուամենայնիվ, ավարտում միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունը, չնայած որ ստիպված է լինում որոշ առարկաներից քննություն հանձնել ոչ թե առանձին ուսուցչի, այլ հատուկ ստեղծված հանձնաժողովի առջև: Նա ոչ մի ճնշման տակ չի հրաժարվում իր համոզմունքներից և «Ավետարանի Հավատքի Քրիստոնյաներ»-ի դավանանքից: 1978-ին, տեխնիկումն ավարտելուց հետո, Միխայիլ Չիժն արդեն քարոզում է Աստծու Խոսքը Կիևի երիտասարդության շրջանում:

- Իվան Լևչուկը հիանալի պատմող էր և քարոզիչ,- շարունակում է իր պատմությունը Մ. Չիժը:- Իմանալով, որ նա լինելու է որևէ տեղական եկեղեցում, ասենք՝ Իրպենում, հավատացյալները այլ վայրերից նշանակված ժամին շտապում էին այնտեղ: Ավելին, գալիս էին նույնիսկ նրանք, ովքեր նախկինում բազմիցս լսել էին Լևչուկ եղբոր հուզիչ պատմությունները: Այդ պատմությունները՝ քրիստոնյաների խիստ հալածանքների եւ փորձությունների մասին, վստահություն և քաջություն էին սերմանում ունկնդիրների մեջ: Ինքը՝ Իվան Անտոնովիչը, միշտ համարձակ ու վճռական էր, գործակալների կամ ճնշողների հետ միշտ խոսում էր առանց վախի նշույլի՝ խղճալով նրանց որպես

սատանայից մոլորվածների ու խաբվածների՝ իրենց մարքսլենինյան գաղափարախոսությամբ: Նրանք միշտ փորձում էին վերահսկել Իվան Անտոնովիչի գործունեությունը, բայց նա գիտեր ինչպես դուրս պրծնել նրանց հսկողությունից, որպեսզի շարունակեր իր եպիսկոպոսական ծառայությունը:

Իվան Անտոնովիչը անկեղծ աղոթող էր, սիրում էր Սուրբ Հոգով լցված հուզառատ աղոթել: Տանը նա եղբայրներին ու քույրերին հյուրընկալում էր միշտ ջերմ և ուրախ, կարողանում էր նրանց լսել, միասին քննարկել, միասին որոշումներ կայացնել: Ոչ մեկին երբեք չի անտեսել:

Զգայուն սիրտը

- Իմանալով, որ Լևչուկ եղբոր միջոցով Աստված հանդիմանում է, խրատում, տալիս տեսիլք և հայտնություն, - հիշում է Լարիսա Մայեր-Բոգուն քույրը,- ես մանկուց երազում էի հանդիպել նրան՝ մանավանդ, որ մայրս ծանոթ էր Իվան Անտոնովիչին և ինձ շատ հետաքրքիր դեպքեր էր պատմել նրա կյանքից:

Եվ ահա, 1977 թվականին ես վերջապես թակեցի Կիևի նրա բնակարանի դուռը: Նա հրավիրեց ներս մտնել, և նայելով ինձ՝ ասաց, որ չգիտի, թե ով եմ ես, բայց դեմքս իրեն ծանոթ է: Երբ ներկայացա՝ ասաց, որ շատ նման եմ մորաքրոջս: Ես Իվան Անտոնովիչից դեռ սպասում էի հրաշքներ՝ երկյուղով, վախով ու հուզմունքով: Իսկ նա իրեն պահում էր պարզ, համեստ, քաղաքավարի: Նրա աչքերը փայլում էին սիրով և սրտակցությամբ: Չնայած նրան, որ այդ ժամանակ կրկին տնային կալանքի մեջ էր, Նա ինձ ցույց տվեց Կիևը: Նրա դստեր և որդու հետ այցելեցինք նաև կենդանաբանական այգի: Եվ անընդհատ զրուցում էինք: Զրուցում էր, իհարկե, Իվան Անտոնովիչը: Ես արդեն հանգստացա՝ մտածելով, որ գուցե նա հիմա Տիրոջից հայտնություն չունի: Բայց նրա հետ մեր զրույցը գնալով ավելի ու ավելի հետաքրքիր էր դառնում: Լևչուկ եղբայրը պատմում էր քրիստոնեական կյանքում հանդիպող խնդիրների, հավատացյալների մոտ երբեմն առաջացող անհաջողությունների պատճառների մասին: Եվ ես զարմանքով հայտնաբերեցի, որ մենք արդեն եր-

կար ժամանակ խոսում ենք անձամբ իմ քրիստոնեական կյանքի մասին: Նա ինձ դեռ ինչ-որ բան էր հիշեցնում՝ կարծես մեկ ուրիշի մասին, իսկ հետո մեծ կարեկցանքով նայեց ինձ ու, կարծես ցանկանալով, որ ես հաստատեմ իր եզրակացությունը՝ հարցրեց.

- Ճի՞շտ է, Լարի՛սա:

Եվ ես լաց եղա: Նրա կողմից կարծես ոչ մի կտրուկ հանդիմանություն, դիտողություն կամ նախատինք չկար, թեև ես զգացի, որ Աստված իմ սիրտը բացեց նրա առաջ: Պարզ օրինակներով նա ինձ ցույց տվեց իմ թերությունները ու սխալները և անմիջապես հուշեց, թե ինչպես դրանք շտկեմ: Քաջալերեց ինձ, վստահություն ներշնչեց Աստծու բարեհաճության և աջակցության հանդեպ: Ես համոզվեցի, որ Իվան Անտոնովիչն իսկապես հուսալի կապ ունի Տիրոջ հետ և նպատակ ունի ոչ թե հանդիմանելու, այլ օգնելու հավատացյալներին՝ կատարելագործվել:

Ես հանդիպել եմ այս օրհնված եղբորը ևս մի քանի անգամ, և յուրաքանչյուր հանդիպում ինձ համար դարձել է անգին գոհար: Ես միշտ ափսոսում եմ, որ նա իր մասին ոչ մի հիշողություն չի գրել: Մեր այդ հիշարժան հանդիպումները կյանքի դժվարին պահերին միշտ օգնել են ինձ՝ փնտրելու ու գտնելու ամենաբարդ հարցերի պատասխանները:

Չյունածածկ գերաների վրա

Յոթանասունականների երկրորդ կեսին Իվան Անտոնովիչը ստիպված էր կրկին աշխատել Ռովնոյի մարզում: Քարոզելով, ուսուցանելով, խոստովանություններ ընդունելով և սրբագործելով Աստծու ժողովրդին՝ նա այցելում էր տեղական եկեղեցիներ՝ Կաստոպոլ, Բեչալ, Տիննո և այլ: Մի գյուղում հավատացյալներին համակրող ոստիկանն իր հարազատների միջոցով զգուշացնում է Լևչուկ եղբորը, որ գործակալներն ընկել են նրա հետքի վրա, փակել են բոլոր կայարանները և մտադիր են ձերբակալել նրան:

Որպեսզի իրեն թաքցնելու պատճառով հավատացյալներից ոչ մեկը չտուժի, Իվան Անտոնովիչը որոշում է անմիջապես վերադառնալ Կիև: Երկաթուղա-

յին կայարաններից մեկում մեքենավարից իմանալով, թե որ կողմ է ուղղվում անտառափայտով բարձված էշելոնը՝ նա տեղավորվում է բաց վագոնում՝ գերանների մեջ: Նա իջեցնում է գըլխարկի ականջները, բարձրացնում վերարկուի օձիքը, հանդիպակաց սառը քամուց պատսպարվում գերանների ետևում: Գիշերը ձյուն է գալիս, իսկ ցերեկը ստիպված է լինում թաքնվել ձնակույտի մեջ՝ միայն շնչառության համար անցք բացելով: Նա Կին է հասնում խիստ մըրսած, պարանոցի վրա չիբաններ առաջացած՝ այնպես, որ չի կարողանում գլուխը շարժել: Տանը իմանում է, որ Կիևի մարզի Բրովարսկի շրջանի Կնյաժիչի գյուղի հավատացյալներից իրեն խնդրել են, որ իրենց ջրով մկրտի՝ չսպասելով գարնան գալուն: Նա չէր կարող մերժել նորադարձներին, ովքեր չեն ցանկանում սպասել գարնանը: Բացի դրանից, հավատում էր, որ ջրի մկրտության ժամանակ Աստված իրեն նորից կբժշկի: Ամեն ինչ տեղի է ունենում այնպես, ինչպես նա հավատում էր: Մրսածությունն ու չիբաններն անցնում են, երբ նա կանգնած է լինում ջրի մեջ:

Այս հիշարժան դեպքի մասին մեզ պատմեց նորից եպիսկոպոս Ադամ Օզերչուկը:

Կյանքի խնդիրներն ու ջրով լի բաժակը

Ուսուցիչը վերցրեց ջրով լի բաժակն ու հարցրեց աշակերտներին.

- Ձեր կարծիքով որքա՞ն է կշռում այս բաժակը:

- Մոտավորապես 200 գրամ,- պատասխանեցին աշակերտները:

- Ինչպես տեսնում եք, այն այդքան էլ ծանր չի կշռում,- ասաց ուսուցիչն ու հարցրեց,- իսկ ի՞նչ կլինի, եթե ես այն մի քանի րոպե պահեմ ձեռքումս:

- Գրեթե ոչինչ չի լինի:

- Իսկ եթե պահեմ այսպես մեկ ժա՞մ:

- Ձեր ձեռքը կհոգնի:

- Իսկ եթե այսպես պահեմ մի քանի ժա՞մ:

- Ձեր ձեռքը կցավի:

- Ճի՛շտ է: Իսկ եթե այս դիրքով պահեմ մի ամբողջ օ՞ր:

- Ձեր ձեռքը կթմրի, գուցե և կաթվածահար լինի,- պատասխանեց աշակերտներից մեկը:

- Շա՛տ լավ,- շարունակեց ուսուցիչը,- բայց փոխվե՞ց արդյոք բաժակի քաշը:

- Ո՛չ,- հնչեց պատասխանը:

- Հապա որտեղի՞ց առաջացավ ձեռքի ցավը:

- Երկարատև լարվածությունից,- պատասխանեցին աշակերտները:

- Ի՞նչ պետք է անեմ ցավից ազատվելու համար:

- Թողնե՛լ բաժակը,- հետևեց պատասխանը:

- Ճի՛շտ այդպես էլ տեղի է ունենում կյանքի խնդիրների դեպքում,- բացականչեց ուսուցիչը: Եթե դրանք մի քանի րոպե պահեք գլխում՝ նորմալ է: Ժամերով մտածե՛ք դրանց մասին, ու կսկսեք ցավ զգալ: Իսկ եթե օրեր շարունակ մտածեք, ապա դա ձեզ կսկսի կաթվածահար անել, և այլևս ոչ մի ուրիշ բանով չեք կարողանա զբաղվել:

Իսկ ցավից ազատվելու համար անհրաժեշտ է գլխից բաց թողնել խնդիրները: **Մատթ.6:31-34**-ում կարդում ենք. *«Ուրեմն հոգ մի ընեք՝ ըսելով, ինչ՞ պիտի ուտենք, կամ ինչ՞ պիտի խմենք, կամ ինչ՞ պիտի հագնինք: Քանզի այդ բոլոր բաները հեթանոսները կխնդրեն. վասն զի ձեր երկնավոր Հայրը գիտէ՝ թէ այդ բոլոր բաները ձեզի պէտք են: Բայց առաջ խնդրեցէք Աստուծոյ թագաւորութիւնը և անոր արդարութիւնը, ու այդ բոլոր բաներն ալ ձեզի պիտի տրուին: Ուստի վաղուան համար հոգ մի՛ ընէք, վասնզի վաղուան օրը իրեն համար հոգ պիտի ընէ, հերիք է օրուան իր նեղութիւնը»:*

Թե ինչպես բժշկվեցի քաղցկեղից

ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ես 35 տարեկան էի, երբ ինձ մոտ քաղցկեղ հայտնաբերվեց: Ունեի կին, երեխաներ, և ինձ համար սարսափելի էր մտածել մահվան մասին: Հիշում եմ, երբ ախտորոշման պատասխանը իմացա՝ տուն վերադարձա, նստեցի բազմոցին ու դառնորեն լաց եղա: Կողքիս նստել էր մայրս և ասում էր. «Որդի՛ս, այնքան եմ ուզում օգնել քեզ, բայց չգիտեմ՝ ինչպես»:

Որպես հավատացյալ մարդ՝ ես գիտեի, որ իմ կյանքը Աստծուց է կախված: Եվ այս ամենին իմ առաջին արձագանքը անվերջանալի հարցերն էին՝ ուղղված հենց Նրան: Ձեռքս վերցնելով Աստվածաշունչը՝ ես սկսեցի փնտրել իմ հարցերի պատասխանները:

Եվ պատկերացնո՞ւմ եք, կարդալով Սուրբ Գիրքը՝ իմ աչքերը ասես հանկարծակի բացվեցին, և ես տեսա, թե որքան մեղքեր եմ գործել՝ լինելով հավատքի մարդ ու հաճախելով եկեղեցի: Այդ ժամանակ մի կողմ թողեցի իմ բոլոր հարցերը և խնդրեցի Տիրոջը. «Օգնի՛ր գիտակցել ինձ իմ բոլոր մեղքերն ու սխալները: Օգնի՛ր ուղղել այդ բոլոր սխալները՝ քանի դեռ կենդանի եմ, որպեսզի երբ ժամանակը գա Քո առջև կանգնելու՝ լինեմ մաքուր»:

Եվ իմ հիշողությունը ասես բացվեր, ու ես հերթով տեսնում էի, թե ինչեր էի արել: Հիշեցի՝ ինչպես էի մի անգամ վիրավորել տարեց մարդու, ինչպես էի անարդար վարվել իմ ընկերների հետ, ինչպես էի ստել… Ես քարացել էի, գրեթե ուժ չունեի շարժվելու, քանզի կարճ ժամանակում կորցրել էի 35 կգ: Չէի կարողանում երկար խոսել, մանկական ձայները նյարդայնացնում էին ինձ, դարձել էի դյուրագրգիռ…

Հիշելով իմ բոլոր չար գործերը՝ ես մի կերպ հավաքեցի բոլոր ուժերս, գտա այն մարդկանց հեռախոսահամարները, որոնց հետ վատ էի վարվել՝ և հերթով զանգեցի. «Ներեցե՛ք, խնդրում եմ, որ տարիներ առաջ ձեզ հետ վատ եմ վարվել»: Եվ բոլոր մարդիկ, ում ես զանգում և ներողություն էի խնդրում, ասում էին. «Ես քեզ ներում եմ, միայն թե ապրի՛ր»:

Զարմանալի ազատություն էր գալիս հոգուս մեջ: Եվ բոլորին, ում ես ճանաչում էի՝ խնդրում էի աղոթել ինձ համար՝ անկախ նրանից, թե ո՛վ ո՛ր եկեղեցին էր հաճախում. միայն թե քրիստոնյա լինեին: Տարբեր հարանվանություններից մարդիկ՝ մոտիկ ու հեռու, աղոթում էին ինձ համար:

Մի անգամ նույնիսկ մի 98 տարեկան պապիկ, ում մի ժամանակ մեր գործարանը օգնել էր փոքր հարցում, իմ հիվանդության մասին իմանալով՝ երկու երիտասարդների էր ուղարկել ինձ մոտ: «Ահա՛, մեր հավատացյալ պապիկը քեզ մեղր է ուղար-

կել: Եվ խնդրել է փոխանցենք իր խոսքերը. «Կե՛ր, առողջացի՛ր, մենք աղոթում ենք քեզ համար»:

Նրանց գնալուց հետո ես նստեցի մեր այն նույն բազմոցի վրա ու նորից հոնգուր-հոնգուր լաց եղա, բայց այս անգամ՝ երջանկությունից. «Տե՛ր, ո՞վ եմ ես, որ Դու ինձ այսպիսի սիրով ես շրջապատում»:

Բժիշկներն ինձ առաջարկել էին քիմիաթերապիայի կուրս անցնել, և ես չգիտեի՝ ընդունե՞լ դա, թե՞ ոչ, քանի որ գիտեի բազում մարդկանց, որոնք անցել էին քիմիաթերապիա, բայց հետո, միևնույնն է, չէին բուժվել:

Աշնանային մի ուշ երեկո հազիվ քայլելով դուրս եկա մեր բակ, նայեցի աստղազարդ երկնքին ու անկեղծորեն իմ սիրտը բացեցի երկնային Հոր առաջ: «Երկնային Հա՛յր, իմ Տե՛ր, իմ Արարի՛չ, Դու գիտես իմ օրգանիզմի յուրաքանչյուր բջիջը: Դու գիտես, թե ինչ է կատարվում ինձ հետ, բայց ես չգիտեմ՝ ինչպես վարվել: Ես վախենում եմ: Ես չեմ ուզում, որ իմ երեխաները անհայր մեծանան, քանզի ինքս այդպես եմ մեծացել: Խնդրո՛ւմ եմ, օգնի՛ր ինձ»,- ասացի ես: Եվ այդ գիշեր երազումս տեսա Քրիստոսին, Ով մոտեցավ, բռնեց վախից դողացող իմ ձեռքը և ասաց, որ վստահեմ բժիշկներին»:

Ես, իհարկե, այդպես էլ արեցի, սկսեցի անցնել քիմիաթերապիայի կուրսը: Թեպետ դա շատ դժվար ընթացք էր, բայց ես գիտեի, որ Աստված ինձ հետ է, ու բացի դրանից, հիվանդանոցում կային քաղցկեղով շատ հիվանդներ, և շատերին ես ավետարանեցի՝ պատմելով Հիսուս Քրիստոսի անսահման սիրո ու փրկարար զորության մասին:

Քիմիաթերապիայից հետո բժիշկն ինձ կանչեց իր մոտ և, նայելով անալիզների պատասխանին, ասաց, որ ուռուցքը երկու անգամ փոքրացել է: Դրանից հետո ես անցա նաև ճառագայթային բուժում, որը նույնպես բարդ ընթացք էր ինձ համար, սակայն որից հետո ինձ իսկական հրաշք էր սպասում:

Այս անգամ անալիզների արդյունքը ապշեցուցիչ էր: Ուռուցքը լիովին անհետացել էր, ինքս էլ ինձ շատ լավ էի զգում:

Այդ օրը, երբ դուրս եկա հիվանդանոցից և ինքս էի վարում իմ մեքենան, ոչ թե աղոթում էի, այլ պարզապես գոռում էի ուրախությունից. «Տե՛ր, ի՞նչ կարող եմ անել Քեզ համար»:

Եվ տանը, երբ կարդում էի Աստվածաշունչը, հասկացա, թե

ինչ է ամենից շատ ուզում Աստված, որ ես անեմ՝ իմ շուրթերի գոհությունը: Եվ հասկացա նաև, որ բացի ուղղակի Նրան գոհություն ու շնորհակալություն հայտնելուց, իմ շուրթերի գոհությունը կլինի, եթե ես մարդկանց պատմեմ իմ վկայությունը: Հենց այդպես էլ անում եմ մինչև օրս:

Աստված նույնն է՝ երեկ, այսօր և հավիտյան, և ինչպես դարեր առաջ՝ այսօր էլ Նա շարունակում է բժշկել մարդկանց:

Վիկտոր Կորոբով

Աստվածաշունչը՝ մայրիկիս թարգմանությամբ

Մի քանի քրիստոնյա երիտասարդներ քննարկում էին, թե Աստվածաշնչի թարգմանություններից որն է լավագույն տարբերակը:

Առաջինը նշում էր, որ իրեն դուր է գալիս «Քինգ Ջեյմս» տարբերակը, քանի որ այն շատ գեղեցիկ լեզվով է շարադրված:

Երկրորդը կարծում էր, որ ամենուրեք օգտագործվող տարբերակն է լավագույնը, քանի որ այն ավելի մոտ է եբրայերեն և հունարեն բնօրինակին:

Երրորդ քրիստոնյան պնդում էր, որ ավելի կողմնակից է ժամանակակից թարգմանությանը:

Մինչ եղբայրները բանավիճում էին, նկատեցին, որ իրենց չորրորդ եղբայրը լուռ է, և երբ ցանկություն հայտնեցին իմանալու նրա կարծիքը, նա ասաց.

– Ինձ ամենից շատ դուր է գալիս մայրիկիս թարգմանությունը:

Չհասկանալով վերջինիս խոսքերը՝ երիտասարդները խնդրեցին բացատրել, թե ինչ նկատի ունի:

- Իմ մայրիկը Աստվածաշունչը թարգմանում է իր առօրյա կյանքով, և այդ թարգմանությունն ամենահամոզիչ թարգմանությունն է, որ երբևէ տեսել եմ:

«ԱՆՀՆԱՐ Է»-ն միայն միտք է...

Մի անգամ ապագա մեծ մաթեմատիկոս Ջորջ Դանցիգը, որ այդ ժամանակ դեռևս ուսանող էր, ուշացել էր համալսարանի դասերից: Պրոֆեսոր Եժի Նեյմանի դասախոսության սկիզբը բաց թողնելով՝ ուսանողն արագ արտագրեց գրատախտակի երկու խնդիրները՝ ենթադրելով, որ դա տնային հանձնարարությունն է: Հանձնարարությունը բարդ էր. դրանք լուծելու համար Ջորջից պահանջվեց մի քանի օր, սակայն նա պրոֆեսորին հանձնեց խնդիրների լուծումը: Դասախոսը ոչինչ չասաց, սակայն մի քանի շաբաթ անց ներխուժեց Ջորջի տուն առավոտվա ժամը 6-ին: Պարզվեց, որ ուսանողը գտել էր նախկինում մաթեմատիկայում անլուծելի համարվող երկու խնդիրների ճիշտ լուծումը, ինչի մասին անգամ չէր էլ ենթադրում, քանի որ ուշացել էր դասերից և չէր լսել գրատախտակի վրա գրված առաջադրանքների նախաբանը: Մի քանի օրում նրան հաջողվեց լուծել առաջադրանքները, որոնց վրա մաթեմատիկոսները տանջվել էին երկար տարիներ, անգամ Էյնշտեյնը չէր կարողացել գտնել դրանց լուծումը:

Ջորջ Դանցիգ (1936թ.)

Ջորջը չէր սահմանափակվել այս խնդիրների անլուծելի լինելու մասին տարածված տեսակետով. նա ուղղակի չգիտեր, որ դա անհնարին է:

Այս պատմությունը ևս մեկ անգամ փաստում է, որ որքան էլ անելանելի իրավիճակներ լինեն մեր կյանքում՝ պետք է հիշել, որ մարդը միայն հավատքով կարող է հասնել իր խնդիրների լուծումներին: Աստվածաշունչն էլ հորդորում է. ***«Որովհետեւ Աստուծոյ առաջին ոչ մի բան անկարելի չէ»*** *(Ղուկաս 1:37)*, ուրեմն՝ ***«...եթէ հաւատաս, Աստուծոյ փառքը կ'տեսնես»*** *(Հովհաննես 11:40)*:

Օլգա Լեմեշյուկի պատմածը

Օլգա և Նաստյա Լեմեշյուկները մանկավարժական կրթություն ստացած երկու քույրեր էին և աշխատում էին Արևմտյան Բելառուսի դպրոցներում: Երբ նրանք դարձի են գալիս, ամբողջովին նվիրվում են Աստծուն և սկսում ծառայել Նրան: Օլգա Լեմեշյուկի հետ մի հետաքրքիր դեպք է պատահում: Մի մարդ դաշույնը ձեռքին մեկ ուրիշի հետևից ընկած հետապնդում է նրան, որ սպանի: Հետապնդվողը մտնում է Օլգայի տուն և ուզում է այնտեղ թաքնվել, բայց հետապնդողը հասնում, բռնում է նրան ու ձեռքը բարձրացնում է, որ սպանի: Օլգան այդ պահին կանչում է Աստծուն.

- Աստվա՛ծ իմ, թույլ մի՛ տուր, որ արյուն հեղվի իմ տան մեջ: Թող սպանություն չկատարվի իմ աչքերի առաջ և այն տեղում, որտեղ այնքա՜ն աղոթքներ ու գոհություններ են բարձրացրել Քո զավակները: Ամեն:

Աստված լսում է Օլգայի աղոթքը: Մարդասպանի ձեռքը քարանում է օդի մեջ, և նա չի կարողանում իրականացնել իր մտադրությունը:

Նիկոլայ Կուկսյուկի փորձից

Երբ ապաշխարեցի, աշխարհիկ զվարճություններից միակ բանը, որ մնացել էր, շաշկին էր: Բայց երբ սկսվում էին համաշխարհային շախմատի խաղերը Անատոլի Կարպովի և Գարրի Կասպարովի միջև, ես հրապուրվում էի նաև այդ խաղով: Մի օր երազ տեսա, որ իբր գտնվում եմ այն դահլիճում, որտեղ տեղի էին ունենում շախմատի համաշխարհային խաղերը: Ես ասես խոնարհվում էի շախմատի ֆիգուրների և դրանց շարժող գրոսմայստերների առաջ: Ամոթով և դառը զղջումով հասկացա, որ Աստծուն խոնարհվելու փոխարեն խոնարհվում եմ օտար մտքերի խաղին: Փառք Աստծուն, որ ինձ խելքի բերեց:

www.barilur.org
info@barilur.org